ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԸ VII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

640-ական թթ. սկզբին արաբական խալիֆաթը նվաճեց Սասանյան պետությունը։ Հայ նախարարները մի պահ ասես պարսկական լուծը թոթափելու հնարավորություն ստացան։ Սակայն անհնարին եղավ միաբանվել և ստեղծել ինքնուրույն պետականություն, քանի որ խալիֆաթի զորագնդերը նույն 640-ին ողողեցին նաև Հայաստանը։ Նրանք, ըստ Սեբեոսի, Հայաստան են ներխուժել Ասորեստանի (Միջագետքի) կողմից և անցնելով Տարոն (անշուշտ Ազձնիքով), գրավել են Բզնունիքը, Աղիովիտը, ապա Բերկրիի ձորով անցել հյուսիս, մտել Կոգովիտ և այլն[1]։ Այսպիսով Վասպուրականը, բացառությամբ Առբերանի և Գառնի գավառներից, այս ժամանակ գրեթե չի ասպատակվել։ Նույն եզրակացության կարելի է հանգել՝ կարդալով նաև մյուս մատենագիրներին։ Ժամանակամերձ Հովհան Մամիկոնյանը վկայում է, որ խալիֆաթի զորքերը Այրարատ են անցել Հարքով, Բասենով, Վանանդով, բայց ոչ Վասպուրականով[2]։ Նույնն ենք տեսնում նաև արաբ հեղինակների մոտ։ Ինչո՞վ բացատրել այս պարագան։ Ըստ երևույթին այստեղ վճռորոշ դեր է խաղացել հիմնականում երկու հանգամանք։ Նախ որ Վասպուրականի որոշ իշխաններ, երկիրն ասպատակություններից զերծ պահելու մտահոգությամբ հպատակություն էին հայտնել արաբ զորապետներին։ Այսպես, Բելաձորիի վկայությամբ զորապետ Իյադը, Միջագետքը գրավելուց հետո արշավեց հարավային Հայաստան։ Իյադի մոտ եկավ Ջավազանի իշխանը (արաբներն այսպես էին կոչում Վասպուրականի Անձևացիք գավառի իշխանին) և խաղաղություն հաստատեց նրա հետ՝ իր տիրույթներից խալիֆայությանը հարկ տալու պայմանով[3]։ Բելաձորին այս անցքը դնում է հիջրի 19 թ. և Մուհառռամի օրերից հաշված՝ 20 թ., այսինքն 640 թ. դեկտեմբեր—641 թ. հունվար։ Այնուհետև Իյադի զորքը գրավում է Արզնը, ապա հասնում Բիթլիս, Խլաթ, հարկելով այս քաղաքների բնակչությանը[4]։ Այսպիսով Իյադի զորաբանակը չի մտել Վասպուրական (այդ զորքի հետդարձին նույնպես նահանգը չասպատակվեց)։ Նույնն է գրում նաև Յակուտը[5]։ Ըստ այդմ արաբական զորքի ասպատակությունից Վասպուրականի զերծ մնալու պատճառներից հիմնականն անշուշտ այն պարագան էր, որ Անձևացյաց և Մոկաց տերերը կարողացել էին համաձայնության գալ արաբների հետ։ Սեբեոսը նույնիսկ նշում է, որ երբ խալիֆայության զորայինները առա-

---

1 Տե՛ս Սեբեոս եպիսկոպոս, Պատմութիւն ի Հերակլն, Թիֆլիս, 1913, էջ 175։

2 Տե՛ս Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 285—286։

3 Արարացի մատենագրեր Հայաստանի մասին, կազմեց Բ. Խալաթյանց, Վիեննա, 1919, էջ 75։

4 Նույն տեղում, էջ 75։

5 Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 76։

ջին անգամ մտան Հայաստան, նրանց առաջնորդում էր Մոկաց Վարդիկ իշխանը[6]։

Որոշակի դեր է ունեցել նաև այն պարագան, որ սպարապետ և Ռշտունյաց տեր Թեոդորոսը զորքով պաշտպանում էր իր երկիրը։ Ուստի խալիֆայության զորագնդերը, որոնց արշավանքի նպատակները ավելի շուտ հետախուզական էին, քան նվաճողական, գերադասեցին շրջանցել Ռշտունիքը, Մոկքը, Անձևացիքը և Վանա լճի հարավային շրջաններով անցնել դեպի հյուսիս։ Սեբեոսի տվյալներից երևում է, որ Թեոդորոս Ռշտունին հետևում էր արաբ զորքի շարժմանը։ Նա առաջին հերթին անցնում է Վասպուրականի Նախճավան և Արտազ գավառները։ Բայց քանի որ այստեղ խալիֆայության զորք չի մտնում, Թեոդորոսը անցնում է Այրարատի Կոգովիտ գավառը և փոքրաթիվ զորագնդով դարանակալելով, հարձակվում է արաբների վրա, բայց, ասում է պատմիչը, «ոչ կարաց զդէմ ունել նոցա»[7]։ Զորքի քիչ լինելուց կարելի է հետևեցնել, որ Թեոդորոսի հրամանատարության տակ չեն եղել Հայաստանի և ոչ էլ նույնիսկ Վասպուրականի մյուս իշխանների զորքերը, թերևս մասամբ այն պատճառով, որ այդ իշխանները համաձայնության եղրեր էին գտել խալիֆայության զորապետների հետ։ Բացի այդ, Թեոդորոսը հույս է ունեցել, որ բյուզանդական զորքը կգա իրեն օգնության։

Սեբեոսի տվյալներից կարելի է կռահել նաև, որ Վասպուրականի որոշ իշխաններ այնուամենայնիվ խալիֆայության զորքին դիմակայելու փորձեր արել են, բայց դարձյալ անհաջող։ Խոսելով Վասպուրականի իշխաններ Թեոդորոս Վահևունու, Շապուհ Ամատունու[8] մասին, որոնք Առավեղյան Խաչենի հետ դվինցիներին են հասցրել հարձակման լուրը, պատմիչը նշում է, որ այս իշխանները կամեցել են ի մի հավաքել ցրված զորականներին, բայց նրանց չի հաջողվել այդ անել և դիմադրություն կազմակերպել[9]։ Խալիֆայության զորքի դեմ Տարոնում Տիրան Մամիկոնյանի գլխավորությամբ կազմակերպված դիմադրության մասին է վկայում Հովհան Մամիկոնյանը[10]։ Այս վկայությունն անշուշտ իրական անցքերի արտացոլումն է։

Այս դեպքերից հետո Ներսես կաթողիկոսի միջնորդությամբ Կոստանդին կայսրը 641 թ. Թեոդորոս Ռշտունուն կարգել է զորավար Հայաստանում, շնորհելով պատրիկի տիտղոս։ Այնուհետև Հայաստանի սահմանների պաշտպանությունը հանձնարարվել է Թեոդորոս Ռշտունուն և բյուզանդական զորապետ Պոկոպոսին[11]։ Կայսրը, ինչպես նշում է Սեբեոսը, Թեոդորոսին նման պատիվներ է շնորհել «ի ձեռն այնր պատերազմի»[12]։ Ուրեմն կայսրը ստիպված է եղել հաշվի նստել հայոց զինական ուժերի հետ։ Կայսրը ոչ միայն ի նկատի է ունեցել Թեոդորոսի դիմադրությունը արաբներին, այլև այն, որ նա նույնպես Վասպուրականի և հարավային Հայաստանի մյուս իշխանների պես կարող էր

6 Սեբեոս, էջ 175։

7 Նույն տեղում, էջ 176։

8 Ամատունիները, ինչպես հայտնի է, Վասպուրականի Արտազ գավառի ժառանգական տերերն էին։ Վասպուրականից էին նաև Վահևունիները (տե՛ս Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 186)։

9 Տե՛ս Սեբեոս, էջ 175։

10 Տե՛ս Հովհան Մամիկոնյան, էջ 285—286։

11 Սեբեոս, էջ 176—177։ „Chronique de Denys de Tellmahre", Paris, 1895, էջ 6—7։

12 Սեբեոս, էջ 176—177։

հակվել արաբների կողմը։ Սակայն ինչպես երևում է Սեբեոսի տվյալներից, կայսերը չի հաջողվել Թեոդորոսին լրիվ իր իշխանության տակ գցել։ Վերջինիս դեմ դավեր է լարել Հայաստան ուղարկված Թումա անունով հույն զորապետը, որը հավանորեն ուներ նաև Թեոդորոսին հսկելու պարտականություններ։ Թուման կարողացավ կաշառքի, խոստումների գնով Ատրպատականի տիրոջը գրգռել Թեոդորոսի դեմ և ձերբակալել տալ նրան։ Թեոդորոսը կապանքների մեջ տարվում է Կոստանդնուպոլիս, բայց կայսրը ազատում է նրան, հույս ունենալով, որ նա չի հարի խալիֆայությանը[13]։ Ուրեմն կայսրը Պռոկոպոսից հետո Հայաստանում զորապետ է նշանակել Թումային, որը կամեցել է գերիշխանություն ունենալ Թեոդորոսի հանդեպ, սակայն վերջինս չի ճանաչել նրա իրավունքները։ Կայսրն ստիպված է եղել Թումա զորապետի փոխարեն Հայաստան ուղարկել Թեոդորոս անունով մի այլ զորապետի[14]։ Հ. Մարկվարտի կարծիքով այս Թեոդորոսը Ռշտունին էր[15]։ Սակայն աղբյուրների տվյալները հակառակն են ասում։ Սեբեոսի հիշած «ոմն Թեոդորոսը» հավանորեն բյուզանդական զորապետ Թեոդորոս Սակելարիոսն էր, որը նկարագրվող անցքերից ընդամենը 4—5 տարի առաջ հիշվում է որպես խալիֆայության դեմ գործող բյուզանդական զորագնդերից մեկի հրամանատար[16]։

Այս անցքերից հետո խալիֆայության զորքը մտել է Ատրպատական։ Սեբեոսը ներխուժման թվականը չի նշում, բայց նրա հաղորդումը, թե այն տեղի ունեցավ «ի գալ միւսում ամի»[17], կռահել է տալիս, որ այդ կատարվել է 642-ին։ Արաբ մատենագիր Տաբարին նույնպես 642 թ. է դնում այն (հիջրի 22 թ.)[18]։ Այնուհետև ներխուժող զորքը բաժանվել է երեք մասի, որոնք արշավել են հետևյալ ուղղություններով՝ 1. դեպի Այրարատ, 2. «ի սեփհական դընգին կողմանս», այսինքն Վասպուրական, 3. դեպի Աղվանք։ «Արդ,— գրում է պատմիչը,— որք ի կողմանս սեփհական գնդին, արշաւեալ սփռեցան և հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն»[19]։ Ուրեմն այս անգամ խալիֆայության զորքին հաջողվել է ասպատակել Վասպուրականը։ Դրանից հետո նրանք հանկարծակի հայտնվում են Այրարատում՝ Երևանի տակ։ Դա զարմանալի չի կարող թվալ, եթե ի նկատի ունենանք, որ հարձակվող երկրորդ զորասյան նպատակը միայն Վասպուրականը չէր, այլ ամբողջ Հայաստանը, մինչդեռ առաջին զորախումբը, որն ըստ պատմիչի գեպի Այրարատ է շարժվել, նպատակ ուներ Այրարատով անցնել դեպի Վրաց աշխարհը։ Սա երևում է Սեբեոսի հետևյալ վկայությունից. «Իսկ այն զաւրն՝ որ ի կողմանս Այրարատեան, եհար սրով մինչև ի կողմանս Տայոց, Վրաց և Աղուանից՝ առ զաւար և զգերութիւն և եկն էանց ի Նախճաւան առ այն զաւր, որ մարտ եդեալ կռուէին ընդ բերդին Նախճուանի»[20]։ Այսպիսով հիշյալ զորա-

13 Նույն տեղում, էջ 186—188։

14 Նույն տեղում, էջ 184 (Սեբեոսի մոտ հիշվում է «ոմն Թեոդորոս» ձևով)։

15 J. Marquart, Osteuropaeische und ostasiatische Streifzüge, Leipzig, 1903 էջ 440։

16 W. Muir, The Caliphate, Its rise, decline and fall, Edinburg, 1924, էջ 128։

17 Սեբեոս, էջ 188։

18 Տե՛ս «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 82։ Տե՛ս նաև W. Muir, նշվ. աշխ., էջ 173—176։

19 Սեբեոս, էջ 188։

20 Նույն տեղում, էջ 191։ Ակադ. Հ. Մանանդյանը («Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պտոլեմեյի քարտեզի», Երևան, 1936, էջ 144—146) կարծում է, որ Սեբեոսի

սյունը Այրարատով անցել է Տայք, Վիրք, ներխուժել Աղվանք և այնտեղից՝ Նախճավան դավառ, որտեղ համանուն քաղաքի մոտ պարտություն էր կրել Վասպուրական ներխուժած զորքը։ Ուրեմն Վասպուրականն ասպատակվել է նաև դեպի Այրարատ շարժված զորախմբի կողմից։

Արաբա-բյուզանդական վերահաս զինարախումներում վճռորոշ էր Հայաստանի դերը։ Խալիֆայությունը նախապատրաստում էր կործանիչ հարվածներ հասցնել կայսրությանը։ Հայաստանը, ինչպես եղել էր հնում, այժմ էլ կարող էր կողմերի համար ծառայել որպես ռազմա-ստրատեգիական հենակետ։ Ուստի Բյուզանդիան ամեն կերպ ջանում է հակառակորդին զրկել այդ հնարավորությունից։ Կոստանդին կայսեր կողմից հայերին առաջարկված դավանական միության ծրագիրը այդ ուղղությամբ արված առաջին լուրջ քայլն էր։ Կոստանդնուպոլսից երկու եկեղեցիները միավորելու առաքելությամբ Հայաստան ուղարկվեց հայազգի ոմն Դավիթ «ի Բագրաւան գեղջէ»[21]։ Կայսրությունը նման քայլի դիմեց, քանի որ վախենում էր, թե հայերը կարող են հակվել արաբների կողմը, հատկապես հույն կղերի հարուցած դավանական խտրության հետևանքով։ Դրա համար անշուշտ հիմքեր կային։ Իրենց հերթին օմայանները ոչ քաղկեդոնական եկեղեցիների հանդեպ վարում էին հանդուրժող քաղաքականություն։ Նրանց թողտվությամբ քրիստոնեական եկեղեցին պահպանեց դատական, հարկային և դպրոցական գործի կազմակերպման որոշակի արտոնություններ։ Ասորիքում քրիստոնեական եկեղեցին նույնիսկ դարձավ օմայանների տիրապետության հենարանը[22]։ Այն բանից հետո, երբ արաբական արշավանքները ժամանակավորապես պայմաններ ստեղծեցին թոթափելու թե՛ սասանյան և թե՛ բյուզանդական լուծը, հայերի մեջ առաջանում է դեպի արաբները կողմնորոշվելու որոշ հակում։ Այս է պատճառը, որ երբ հիշյալ Դավիթը եկավ Հայաստան, Դվինում հավաքված հայ հոգևորականները և նախարարները քննեցին կայսեր առաջարկը և Թեոդորոս Ռշտունու գլխավորած հոսանքի կամքով մերժեցին դավանական միությունը[23]։ Այնուհետև հայ իշխանների առաջ ծառանում է արաբների հետ պայմանագրային կապեր ունենալու կենսական խնդիրը։ Այն իրավաբանորեն ձևակերպվում է 652 թ. Թեոդորոս Ռշտունու և Մուավիայի կնքած պայմանագրով, որի հիմնական սլաքն ուղղված էր Բյուզանդիայի դեմ։ Դաշնագրի մյուս պայմանները պետք է նրպաստեին հիմնական գաղափարին, որը ձևակերպվեց հետևյալ կերպ. «Թշնամի մի մտցէ ի Հայս և եթե գայ Հոռոմ ի վերայ ձեր՝ արձակեմ ձեզ զաւրս յաւգնականութիւն որչափ և դուք կամիջիք»[24]։ Մյուս կողմից հայկական զորքերը պարտավորվում էին կազմ ու պատրաստ լինել Մուավիայի հրամանները կա-

---

«ի յՍրևան»-ը պետք է ընթերցել «Հերաւան»։ Դ. Արգարյանի կարծիքով «յԵրևանը պետք է ընթերցել «Հեր և անդ» (տե՛ս Դ. Արգարյան, «Երևանի» բերդի հնագույն հիշատակությունը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1972, № 8, էջ 30)։ Մեր կարծիքով «յԵրևանը» պետք է ընթերցել «Երևան»։

21 Նույն տեղում, էջ 193։

22 Հատկանշական է, որ տվյալ ժամանակաշրջանի շատ քրիստոնյաների մեջ արմատացել էր այն համոզումը, որ մահմեդականությունը ոչ թե հատուկ կրոն է, այլ քրիստոնեական աղանդներից մեկը (տե՛ս А. Беляев, Арабы, ислам и арабский халифат в раннее средневековье, М., 1966, էջ 170)։

23 Սեբեոս, էջ 193—194։

24 Նույն տեղում, էջ 224։

տարելու։ Ընդսմին պայմանագիրն արտացոլում էր ոչ միայն հայ-արաբական հարաբերությունները և վերջիններիս ու Բյուզանդիայի միջև ստեղծված հակասությունները, այլև խալիֆայության վարած ընդհանուր քաղաքականությունը։ Քննարկվող ժամանակաշրջանում արաբները, մոտ երեք անգամ պակաս լինելով նվաճված երկրների բնակչությունից, չէին խառնվում այդ երկրների քաղաքացիական գործերին։ Նվաճված ժողովուրդներն իրենք էին կազմակերպում իրենց տնտեսությունը, կառավարչակարգը։ Որպեսզի իրենց ձեռքի տակ մշտապես թարմ զինվորական ուժեր ունենան, խալիֆայությունը հարկադրված էր իր զորքերը կենտրոնացնել մշտական ու մեծ զորաճամբարներում և խուսափում էր դրանք ցրել որպես մանր կայազորներ[25]։

Այս է պատճառը, որ հիշյալ դաշնագրով Մուավիան Հայաստան չէր ուղարկելու ոչ մի կառավարիչ կամ զորական. թե՛ քաղաքացիական և թե՛ ռազմական գործերը թողնվում էին հայ իշխաններին։ Սա հայկական իշխանության վերականգնում էր[26]։ Հայաստանում խալիֆայի զորք չպահելը սրա լավագույն ապացույցն էր։ Իհարկե երկրում մշտական զորք չպահելը բնավ չէր նշանակում, թե խալիֆայությունն այնտեղ զորք չի մտցնի, եթե (ինչպես եղավ Հայաստանում VIII դարի առաջին կեսին) թելադրեին հանգամանքները։

Թե որքան էր Հայաստանի շահերին համապատասխանում Թեոդորոս Ռշտունու և Մուավիայի կնքած պայմանագիրը, երևում է նաև նրանից, որ պայմանագրի կնքումից հետո բյուզանդական կողմնորոշում ունեցող հայ իշխանները (որոնց թվում և Մուշեղ Մամիկոնյանը) անցնում են Թեոդորոս Ռշտունու գլխավորած հոսանքի կողմը։ Այնուհետև հայոց բոլոր նախարարները, վկայում է ժամանակակից պատմիչը, «եկեալ ի մի վայր, միաբանեցան, և արարին ընդ միմեանս հաշտութիւն, զի մի եղիցի ի մէջ նոցա սուր և արիւնահեղութիւն... զի և զշինականսն ապրեցուցանեն»[27]։

Օգտվելով պայմանագրի այն կետից, որի թելադրանքով Հայաստանում խալիֆայության զորք չէր պահվելու, Բյուզանդիայի կայսրը նույն թվականին մոտ 100-հազարանոց բանակով արշավեց Հայաստան։ Հայ նախարարների որոշ մասը հակվեց Բյուզանդիայի կողմը և իր զորքով, որ «գնացեալ էին յՌշտունականէն» կաթողիկոսի հետ լքեցին Թեոդորոս Ռշտունուն և մեկնեցին Կարինում բանակած կայսեր մոտ, նրան իրազեկ դարձնելով «զմիտս և զկամս ապստամբութեան Ռշտունեաց տեառն և փութանակի երթևեկս առ նա դեսպանացն իւր զՌշտունեաց տէրն, և լուծին զնա ի պատուոյ իշխանութենէն»[28]։ Կոստանդին կայսրը Թեոդորոս Ռշտունու փոխարեն Հայաստանի պատրիկ նշանակեց այլ անձնավորության, որի ինքնությունը չի հիշվում Սեբեոսի մոտ, իսկ Ղևոնդը գրում է, որ Թեոդորոս Ռշտունու փոխարեն կայսրը «կացուցանէր զՍմբատ ոմն ի տոհմէ Բագրատունեաց, և առաքէր ընդ զօրաւարին իւրում»[29]։ Կայսրը, նույն պատմիչի վկայությամբ, երկիցս Թեոդորոսին հորդորել է միանալ իրեն, հակառակ պարագայում սպառնալով բնաջնջել Ռշտունյաց տոհմը։

---

25 А. Мюллер, История ислама, т. I, СПб, 1835, էջ 305—306; А. Беляев, նշվ. աշխ., էջ 170։

26 Այս մասին տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, «Հայոց իշխան» տիտղոսի ծագումը և Հայոց տերությունը VII դարում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 1, էջ 241—247։

27 Սեբեոս, էջ 238։

28 Նույն տեղում, էջ 226։

29 «Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց պատմութիւն», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 13։

Թեոդորոսն ստիպված էր իր որդուն՝ Վարդին, ուղարկել Սմբատ Բագրատունու մոտ, հրամայելով «միաբանել ընդ թշնամեացն»։ Վարդ Ռշտունին կատարում է հոր պահանջը, բայց հետագայում կրկին հակվում է արաբների կողմը[30]։ Ուշագրավ է կարծեցյալ Շապուհի այն վկայությունը, ըստ որի Թեոդորոս Ռշտունին մահվան անկողնում իր մոտ է կանչում որդուն՝ Վարդին և հորդորում մերձենալ արաբներին (Շապուհի մոտ՝ «պարսիկներին»), որպես դրացիների, որով իսկ շեն կմնար հայոց երկիրը[31]։

Սեբեոսի վկայությամբ, երբ կայսեր նշանակած հայոց նոր զորապետը իր օգնականներով ժամանել է Վասպուրական և մտել Ռշտունիք, Թեոդորոս Ռշտունին ձերբակալել է նրան և նետել Բաղեշի բերդը (որն ըստ երևույթին Թեոդորոսի իրավասության տակ է եղել), մյուսներին՝ Վանա լճի կղզիները, իսկ ինքն անցել է Աղթամար։ Միաժամանակ Թեոդորոսը Վասպուրականի ազատազորքին (Սեբեոսի «զարացն կողմանցն այնոցիկ» դարձվածի տակ հասկացվում է Վասպուրականի իշխանազորքը) հրամայել է գնալ և ամրանալ յուրաքանչյուրն իր գավառում։ Պատմագիրը հիշյալ դարձվածն օգտագործում է «կողմանցն սեփհական գնդին»-ի փոխարեն։ Ըստ Սեբեոսի, բյուզանդացիներին դիմակայում էին՝ 1. Ռշտունյաց (և Վասպուրականի մյուս գավառների) ազատազորքը, 2. Վրաց զորքը, 3. Աղվանից երկրի զորքը, 4. Սյունիքի զորքը[32]։ Պատմիչը հաղորդում է, որ Վասպուրականի իշխաններից Թեոդորոս Վահևունին գրավում է Արփայս բերդը, իսկ Վարազ Ներսեհ Դաշտկարը և Թեոդորոս Վահևունու որդի Գրիգորը, որ Թեոդորոս Ռշտունու փեսան էր, տիրում են Հայաստանի գանձերին, որոնք, ուրեմն, պահվել են Վասպուրականում (հավանաբար Ռշտունիքում)։ «Անդ էին,— գրում է պատմագիրը,— ամենայն գանձքն աշխարհին, եկեղեցւոյ, և իշխանաց, և վաճառականաց»[33]։

Բյուզանդիային մասամբ հաջողվել է ջլատել հայ զինական ուժերը։ Դրանով պիտի բացատրել անշուշտ, որ հայ իշխանները միասնաբար հանդես չեն եկել կայսրության դեմ։ Այդ էր պատճառը, որ Հայաստանում կայսեր դիմակայեցին միայն Վասպուրականը և Սյունիքը, իսկ մյուս նահանգները կա՛մ հնազանդվել էին, կա՛մ էլ բռնել չեզոք դիրք։ Մուշեղ Մամիկոնյանին նշանակելով հայոց հեծելազորի հրամանատար, կայսրն ուղարկեց հիմնական ընդդիմադիր ուժի (որին դաշնակցում էին մյուս երեք ուժերը)՝ «սեփհական գնդի» դեմ՝ 3 հազար զորականներով, իսկ մնացած երեքի (Վիրք, Աղվանք, Սյունիք) դեմ նույնպես ուղարկվում են բյուզանդական զորքեր[34]։ Սեբեոսի տվյալներից երևում է, որ Վրաց աշխարհը նույնպես հնազանդվել է կայսեր, մինչդեռ «յԱղուանն և ի Սիւնին և գունդն սեփհական ոչ հնազանդեցան, զորոց զերկիրն աւար առեալ տարան զինչ և զտին...»[35]։ Ուրեմն բյուզանդական զորքը ասպատակել, թալանի է մատնել Աղվանից աշխարհը, Սյունիքը և Վասպուրականը, իսկ Վրաց աշխարհը զերծ է մնացել դրանից։ Հայաստանն ասպատակած կայս-

30 Նույն տեղում, էջ 13։ «Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետիւ», Վենետիկ, 1862, էջ 68։

31 Շ ա պ ու հ Բ ա գ ր ա տ ու ն ի, Պատմութիւն, Էջմիածին, 1921, էջ 30։

32 Ս ե բ ե ո ս, էջ 227։

33 Նույն տեղում։

34 Նույն տեղում, էջ 228։

35 Նույն տեղում։ Մ. Ղազարյանի կարծիքով Վրաց աշխարհը ցույց է տվել կարճատև դիմադրություն (տե՛ս M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903, էջ 31)։

որը հույս ուներ հայ վերնախավին բռնի ուժով հարկադրել ընդունելու դավանական միության իր ծրագիրը։ Սակայն Թեոդորոս Ռշտունու կողմնակից իշխանները (Վասպուրականի և Սյունիքի) կտրականապես դեմ ելան կայսեր առաջարկին, և այն դարձյալ ձախողվեց։ Դա երևում է նրանից, որ հազիվ էր Կոստանդին կայսրը մեկնել Դվինից, երբ նրա հետ շտապեց հեռանալ նաև դավանական գործարքի կողմնակից Ներսես կաթողիկոսը, որը մնաց Տայքում, մինչև Թեոդորոս Ռշտունու մահը, «զի իշխանքն Ռշտունեաց և այլ իշխանքն, որ ընդ նմա, անհնարին ցասմամբ փքացեալ էին ի վերայ նորա»[36]։ Վասպուրականը անմիջականորեն ենթակա էր խալիֆայության զորքերի ներխուժումների վտանգին, ուստի նրա իշխանները ստիպված էին հակվել դեպի արաբները։ Թեոդորոս Ռշտունին իր կուսակիցների հետ ամրացավ Աղթամարում և օգնական զորք խնդրեց Ասորիքի կառավարիչ Մուավիայից՝ ընդդեմ Բյուզանդիայի։ Մուավիան ուղարկեց 7 հազարանոց բանակ, որը մտավ Աղիովիտ և Բզնունիք, իսկ Թեոդորոս Ռշտունին դուրս եկավ Աղթամարից և մեկնեց խալիֆայության զորքի բանակատեղին[37]։ Ինչպես տեսնում ենք, թեև որպես Բյուզանդիային հակոտնյա ուժեր գործում են Վասպուրականի իշխանները, սակայն Արծրունիները չեն երևում ասպարեզում։ Նրանց դերը տակավին համեստ է և զորեղ տոհմերի քաղաքական գծին համակերպվող։

Այսպիսով խալիֆայության զորքը տիրում է Վանա լճի հյուսիս-արևելյան ավազանին։ Նպատակն իհարկե ոչ այնքան Հայաստանն էր, որքան պայքարը մրցակից կայսրության դեմ։ Այդ պայքարին զորավիգ եղան նաև Վասպուրականի և մյուս հայ իշխանները՝ Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ։

Բյուզանդացիների դեմ տարած հաղթանակից հետո Թեոդորոս Ռշտունին մեկնում է Դամասկոս և անձամբ հանդիպում Մուավիային։ Վերջինս է՛լ ավելի է ընդլայնում Թեոդորոսի իրավունքները։ «Եւ իշխանութիւն ետ նմա,— գրում է պատմիչը,— զՀայս, և զՎիրս և զԱղուանս և զՍիւնիս, մինչև ցԿապկոհ և ցՊարհակն ձորայ»[38]։ Սակայն ֆեոդալական հակասությունները հարմար պահին վերստին զգացնել կտային իրենց։ Երբ Թեոդորոս Ռշտունին հիվանդացավ և քաշվեց Աղթամար, հայ իշխանները, մնալով իրենց կամքին (մանավանդ որ երկրում չկար ո՛չ խալիֆայության և ո՛չ էլ բյուզանդական իշխանություն), «բաժանեցին զերկիրն ըստ թուոյ իւրաքանչիւր հեծելոց, և կարգեցին հարկապահանջս ոսկւոյ և արծաթոյ»[39]։ Ուրեմն նախարարները ինքնահաճորեն, թերևս մասամբ ի խախտումն 652 թ. պայմանագրի, իրենց կամեցածի չափ պահել են հեծելազորք, գանձել հարկեր։ Նմանօրինակ վարքագիծն անշուշտ ցույց էր տալիս Թեոդորոս Ռշտունու իշխանության, հայարաբական դաշինքի սասանում։ Այս է պատճառը, որ Թեոդորոս Ռշտունին «խնդրեաց իւր զաւրս յԻսմայելացւոցն, զի հարցէ զՀայն և հալածական արասցէ, և զՎիրս սատակեսցէ ի սուր սուսերի»[40]։ Նախարարների վարքագծի վրա հավանաբար որոշակի ազդեցություն են թողել բյուզանդասեր տարրերը։ Պետք

36 Սեբեոս, էջ 232, 244, հմմտ. Ղևոնդ, էջ 14, Վարդան, էջ 69։

37 Սեբեոս, էջ 232։

38 Նույն տեղում, էջ 223։ Այս մասին տես նաև՝ M. Ghazarian, նշվ. աշխ., էջ 32; J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 886, Paris, 1919, էջ 34, 80։

39 Սեբեոս, էջ 238։

40 Նույն տեղում, էջ 239։

է կարծել, որ կայսրության դրդումով էր նաև, որ նույն ժամանակ Ատրպատականն ապստամբեց արաբների դեմ, սպանելով նրանց հարկահանին[41]։

Ստեղծված իրավիճակում բյուզանդական կողմնորոշում ունեցող տարրերը վերստին կարող էին գլուխ բարձրացնել և այդպիսով հեշտացնել Հայաստանի գրավումը Բյուզանդիայի կողմից։ Ուստի Թեոդորոսի խնդրանքին անսալով, խալիֆայությունը զորք մտցրեց Հայաստան՝ Հաբիբ Իբն Մասլամայի գլխավորությամբ։ Վերջինս գրավեց Կարինը, ապա շարժվեց հարավային Հայաստանի Մարդաղի գավառը, որտեղ նրա մոտ եկավ Խլաթի տերը՝ 640-ական թթ. Խլաթը գրաված զորապետ Իյադի թղթով, որը հաստատեց Հաբիբ Իբն Մասլաման, ապահովելով Խլաթի իշխանի անձը, զորքը, երկիրը և խաղաղություն հաստատեց նրա հետ՝ իրեն հարկ տալու պայմանով[42]։ Բելաձորին չի դնում Հաբիբ Իբն Մասլամայի արշավանքի ստույգ տարեթիվը, իսկ նրան կրկնող Իբն ալ-Ասիրը այդ արշավանքը դնում է հիջրի 31 թ. (651 թ.)[43]։ Մ. Ղազարյանը արշավանքի թվական է համարում 643-ը, իսկ Լորանը՝ 645-ի հոկտեմբերը[44]։ Սակայն հիշյալ արշավանքը ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել 653 թ.։

Այսպիսով, հազիվ մեկ տարի էր անցել հայ-արաբական դաշնագրի կնքումից, և ահա խալիֆայությունը որոշակիորեն փոխեց իր վերաբերմունքը հայերի հանդեպ։ Գրեթե ամբողջ Հայաստանը գրավեց նրա զորքը։ Հայ նախարարները ստիպված էին հնազանդվել խալիֆայությանը, որովհետև, ինչպես վկայում է Սեբեոսը, «երկիւղ անհնարին մահու կայր ի վերայ նոցա»[45]։ Խլաթի գրավումից հետո Հաբիբ Իբն Մասլաման անցավ Վանա լճի հյուսիս-արևելյան կողմերը, գրավեց Արճեշը, Արծկեն, Բերկրին և այլ բնակավայրեր։ Ըստ Բելաձորիի, խալիֆաթի զորապետի մոտ կամովին եկավ Մոկաց տերը (Մոկքը Բելաձորին համարում է Վասպուրականի մասը), որի անունը պատմագիրը չի նշում։ Պետք է կարծել, որ այս ժամանակ էլ Մոկքում տիրում էր նույն Վարդիկ իշխանը, որն եկել էր Իյադի հետ ձեռք բերված պայմանավորվածությունը վերահաստատելու[46]։ Հաբիբ Իբն Մասլաման խաղաղություն է կնքում Մոկաց տիրոջ հետ՝ նրա տիրույթները գրավելու պայմանով։ Ապա դեսպաններ է ուղարկում Արճեշ և ուրիշ քաղաքներ, որոնց բնակչությունից գլխահարկ է վերցնում, իսկ իշխանների հետ հաստատում խաղաղություն՝ հարկ տալու պայմանով[47]։ Բելաձորիի և նրան հետևող Յակուտի և Իբն ալ-Ասիրի տվյալ-

---

41 Նույն տեղում։

42 Տե՛ս «Արարացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 41—42։

43 Տե՛ս նույն տեղում, էջ 129։

44 M. Ghazarian, նշվ. աշխ., էջ 17; J. Laurent, նշվ. աշխ., էջ 3»6։

45 Սեբեոս, էջ 242։

46 Տե՛ս «Արարացի մատենագրեր», էջ 42։ „Из Тарих ал-камиль Ибн-ал-Асира.“ Баку, 1940, էջ 18։ Նույն ժամանակաշրջանին է վերաբերում մի ձեռագիր հիշատակարանի հետևյալ հաղորդումը (գրված VIII դարի սկզբին)։ Արարները, ասվում է հիշատակարանում, «առին և զամենայն տունս Շամայ... եւ ապա ելին յաշխարհն Հայոց, ի գաւառն Բզնունեաց եւ զնոյն կոտորումն առնէին։ Ապա գթացեալ Մահմատն արար շաղաւաթ եւ երարձ զսուրն ի հայոց։ Եւ արար զնոսա ի կամս ապաստան զի համարձակ պաշտեսցեն զՔրիստոս Աստուած. եւ տայցեն զճաղայն։ Զայս աւրէն ի Խլաթ քաղաք եղին, ի գաւառն Բզնունեաց» (տե՛ս «Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», կազմեց Հ. Տաշյան, Վիեննա, 1895, էջ 59)։

47 «Արարացի մատենագրեր», էջ 42։

ներով Հաբիբ Իբն Մասլաման Վանա լճի («Տիրիխի ծովակ») նկատմամբ իրավասություն ձեռք չբերեց, և լիճը մնաց ընդհանուրի սեփականություն, մինչև որ Միջագետքի և Հայաստանի կառավարիչ դարձավ Մուհամմադ Իբն-Մրվանը, որը յուրացրեց ձկնորսության իրավունքը և վաճառեց այդ արտոնությունը, ջանալով լիճը դարձնել եկամտի աղբյուր։ Այնուհետև լիճը դարձել է նույն Մրվանի որդու սեփականությունը[48]։

Այս արշավանքների ընթացքում խալիֆայության զորքն ամրանում է նաև Ջարեհավանում, իսկ բյուզանդական զորքը, Մարկիանոս զորապետի գլխավորությամբ, արշավում է Նախճավանի վրա և «մարտեաւ ընդ բերդին՝ զի աւարեսցէ զնա ևս»[49]։ Հաջորդ գարնանը խալիֆայության զորքը հարձակման անցավ Նախճավանը պաշարած բյուզանդացիների դեմ և փախուստի մատնեց հույներին[50]։ Հաբիբ Իբն Մասլաման, վկայում են Բելաձորին և Յակուտը, Նախճավանի բնակիչների հետ կնքեց դվինցիների հետ ունեցածին հար և նման պայմանագիր, որով երաշխավորվում էր քաղաքի բնակիչների, նրանց կրոնի, գույքի անձեռնմխելիությունը[51]։ Նախճավանի գրավումը փաստորեն նշանակում էր բյուզանդացիների վտարում ոչ միայն Վասպուրականից, այլև հարավային Հայաստանի մյուս մասերից։ Մարկիանոս զորապետը մազապուրծ փախչում է Վրաստան։ Վասպուրականի հայ նախարարները, անշուշտ Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ, վերստին խալիֆայության հետ կնքում են պայմանագիր (այս անգամ, իհարկե, սոսկ Վասպուրականի անունից)։ «Նաշավայում (Նախճավան—Վ. Վ.),— գրում է Բելաձորին,— Հաբիբին ներկայացավ Բասֆուրջանի (Վասպուրականի—Վ. Վ.) Բատրիկը, որը Հաբիբի հետ կնքեց պայմանագիր՝ իր ամբողջ երկրի ու նահանգի անունից։ Այդ պայմանագրով Բատրիկը պարտավորվեց ամեն տարի մուծել որոշակի չափով հարկ։[52] «Բասֆուրջանի Բատրիկը» ոչ այլ ոք է, եթե ոչ Թեոդորոս Ռշտունին։ Բելաձորիի վերը բերված դարձվածը («իր երկրի ու նահանգի անունից») պետք է հասկանալ Հայաստանի և Վասպուրականի անունից։ Այս պայմանագիրը ըստ երևույթին անհրաժեշտ է եղել հաստատել Դամասկոսում, որտեղ և հայ պատանդներին միանալով՝ մեկնում է Թեոդորոս Ռշտունին։ Սակայն Դամասկոսում նա վախճանվում է, նրա դիակը բերվում է Ռշտունիք և ամփոփվում «ի գերեզմանի հարց իւրոց»[53]։

Թեոդորոս Ռշտունու մահը, դատելով Սեբեոսի տվյալներից, պետք է դնել 654 թ. ամռանը։ Հայտնի է, որ պատմիչը Թեոդորոս Ռշտունու և Մուավիայի դաշնագիրը դնում է Կոստանդ II-ի (641—668) կայսրության 12-րդ տարում, այսինքն 652 թ.[54]։ Որ 12-րդ տարի ասելով պատմիչը ի նկատի է ունեցել

---

48 «Արարացի մատենագրեր», էջ 42—43, 131—133։ «Արաբական աղբյուրները...», էջ 32։ Վանա լճի մասին տե՛ս նաև «Ибн-ал-Асир», էջ 22; «Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане», пер. Н. А. Караулова, Тифлис. 1901, вып. XXIX, էջ 25։

49 Սեբեոս, էջ 242։

50 Տե՛ս նույն տեղում, էջ 243, Баладзори, Книга завоевания стран. Баку, 1927, էջ 10—11։

51 «Արաբական աղբյուրները...», էջ 117։

52 Баладзори, Книга завоевания стран, էջ 11։

53 Սեբեոս, էջ 243։

54 Այս մասին տե՛ս Բ. Ն. Առաքելյան, Ժամանակագրական դիտողություններ, Արմֆանի «Տեղեկագիր», 1941, № 1, էջ 61—63։

652 թ., երևում է նաև հետևյալից. հայտնի փաստ է, որ 648 թ. Մուավիայի և Բյուզանդիայի միջև կնքված զինադադարը ավարտվեց 651 թ.։ Սեբեոսը (էջ 233) գրում է, որ «յամին մետասաներորդի Կոստանդի, լուծումն լինի հաշտութեանն՝ որ ընդ Կոստանդին և ընդ Մաւիաս...»։ Ուրեմն եթե «մետասաներորդ» տարին 651 թ. է, «յերկոտասաներորդը» կլինի 652 թ.։

Ինչպես տեսանք, նույն 652-ին (հավանորեն աշնանը) կայսրը զորք մըտցըրեց Հայաստան։ Այնուհետև, ըստ Սեբեոսի, դեպքերը զարգանում են հետևյալ հաջորդականությամբ։ «Եւ,— գրում է պատմիչը,— իբրև անցին աւուրք ձմերայնոյն մերձ ի զատիկն մեծ» (Սեբեոս, էջ 233), այսինքն 653-ի գարնանը, բյուզանդացիք փախան Տայք։ Նույն ժամանակ էր, որ Թեոդորոս Ռշտունին մեկնեց Մուավիայի մոտ՝ Դամասկոս և ի տիրություն ստացավ Հայաստանը, Վրաց և Աղվանից աշխարհները, Սյունիքը։ Այնուհետև, գրում է պատմիչը, «յետ անցանելոյ աշնանային ժամանակին՝ ի մերձենալ ձմերայնոյ» (Սեբեոս, էջ 237), այսինքն 653-ի ձմեռնամուտին, խալիֆայության զորքը մտավ Դվին։ Հաջորդ խոշոր իրադարձությունը, որ պատմիչը դնում է «յայսմ ամի» (Սեբեոս, էջ 239), այն է՝ նույն թվականին, մարաց ապստամբությունն է և Հաբիբ Իբն Մասլամայի արշավանքը Հայաստան։ 653-ի ձմռանը վերստին ծայր են առնում բյուզանդա-արաբական կռիվները Այրարատում, Վասպուրականում և այլուր (Սեբեոս, էջ 242), իսկ «ի հասանել ժամանակի գարնանայնոյ» (Սեբեոս, էջ 243), այսինքն 654-ի գարնանը, վերսկսվում են հույն-արաբական ընդհարումները, բյուզանդական զորքը փախչում է Վիրք, խալիֆայության զորքն ասպատակում է Հայաստանը, Աղվանքը, պատանդ է տանում հայ ազատներին, որոնց հետ, ինչպես տեսանք, Ասորիք է մեկնում նաև Թեոդորոս Ռշտունին և նույն թվականին էլ կնքում իր մահկանացուն[55]։

Թեոդորոս Ռշտունու մահից հետո Հայոց իշխան է դառնում նրա փեսան՝ Համազասպ Մամիկոնյանը։ Հայ իշխանները (որոնց թվում էին նաև Վասպուրականի տերերը) շարունակում են կողմնորոշվել դեպի խալիֆայությունը, թեև Բյուզանդիան շարունակում է իր սիրախաղերը հայերի հանդեպ։ 661 թ. խալիֆայության գլուխ կանգնեցին Օմայանները, որոնց օրոք նույնպես շարունակվեցին պատերազմները Բյուզանդիայի հետ։ Արաբա-բյուզանդական հակամարտության վերարծարծման պայմաններում բնականաբար կյանքի էր կոչվում խալիֆայության համար կարևոր այն հարցը, թե ում կողմը կբռնեն հայերը։ Մուավիա խալիֆան հայերին հրովարտակ է ուղարկում, գրելով. «Եթե ոչ հարկեսջիք ինձ և ոչ անկջիք ընդ լծով ծառայութեան իմոյ՝ ի սուր սուսերի մաշեցից զամենեսեան»[56]։ Հայերն ընդունում են Մուավիայի առաջարկը, որով իսկ որոշակի կերպով կայունանում են հայ-արաբական հարաբերությունները։ 670 թ. խալիֆայության զորքերն արդեն ձմեռում են Հայաստանում, որ-

---

55 Թեոդորոս Ռշտունու մահվան տարեթիվը Մ. Ղազարյանի մոտ 656-ն է (Armenien unter der arab. Herrschaft, էջ 32), բայց նույն հեղինակի այն կարծիքը, թե Հաբիբ Իբն Մասլամայի արշավանքը Հայաստան տեղի է ունեցել 643-ին (տե՛ս նշվ. աշխ., էջ 17), բոլորովին անհարիր է մինչև 656 թ. տեղի ունեցած անցքերի ժամանակագրական հյուսվածքին։ Ըստ երևույթին Մ. Ղազարյանը օգտվել է Ղևոնդի պատմության՝ Կ. Եղյանի գրած առաջաբանից, ուր նույնպես 656 թ. է գրված (տե՛ս Ղ ևոնդ, էջ 63)։ Ս. Մելիք-Բախշյանը իր «Հայաստանը VII—IX դարերում» (Երևան, 1968, էջ 83) աշխատության մեջ ընդունում է 656 թ.։

56 Ղ ևոնդ, էջ 14։

պեսզի գարնանը վճռական հարձակում գործեն Բյուզանդիայի դեմ[57], հանգամանք, որը վկայում է թե 652-ին Մուավիայի հետ կնքած պայմանագիրը (որն, ինչպես տեսանք, ուղղված էր Բյուզանդիայի դեմ) պահպանում է տակավին իր ուժը։ Նույնիսկ Բագրատունիները վերակողմնորոշվում են։ Արդեն Գրիգոր Մամիկոնյանի մահից հետո, 686 թ. Հայաստանի կառավարիչ է դառնում Աշոտ Բյուրատյան Բագրատունին։ Բյուզանդիան շարունակում է խանգարել կողմերի մերձեցմանը։ Հուստինիանոս II կայսրը (685—698) զորք է ուղարկում Հայաստան, որը վերստին մատնվում է սրի ու ավերի[58]։ Այս պայմաններում առիթից օգտվում էին զանազան հրոսակներ, որոնք անխնա և հաճախ անպատիժ ասպատակում էին երկիրը։ Ղևոնդի վկայությամբ Աշոտ Պատրիկի իշխանության չորրորդ տարում (689 թ.) «գունդ մի ասպատակութեամբ յորդւոցն իսմայելի» ներխուժեց Վասպուրական և խժդժություններ կատարեց Գողթն և Նախճավան գավառներում, բռնանալով հատկապես Խրամի, Ջուղայի և Խորշակունիսի բնակիչների նկատմամբ[59]։ Հարձակումը հավանորեն կատարվել է Ատրպատականի կողմից (հրոսախմբի բռնացումներին ենթարկվում են նաև «յաւանս մարաց») ու թեև չի ունեցել վերուստ հրահանգված բնույթ, բայց խոր անհանգստություն է պատճառել երկրում։ Հրոսախմբի դեմ բորբոքված կովում մահացու վիրավորվեց Աշոտ Բյուրատյանը[60]։ Այն, որ Վասպուրական ներխուժած թշնամուն հակահարված են տալիս ոչ թե նահանգի իշխանները, այլ Բագրատունի իշխանապետը (անշուշտ ոչ միայն իր դիրքի բերումով), վկայում է Վասպուրականում Բագրատունիների իրավասու լինելու մասին։ Ուրեմն մինչև 705 թ. Նախճավանի ու Խրամի աղետը Վասպուրականում Բագրատունիների գերակայությունը գգալի էր, թեև տակավին ասպարեզից չէր անհետացել Ռշտունյաց զորեղ տոհմը[61]։ Այս շրջանում դեռևս հնարավոր չէր միավորել նահանգի բոլոր նախարարներին և իրականացնել մեկ տոհմի անբաժան տիրապետությունը Վասպուրականում։

ВАСПУРАКАН ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ VII ВЕКА

В. М. ВАРДАНЯН

(Резюме)

В 640 г. войска халифата вторглись в Армению, но обошли Васпуракан, т. к. местные князья сочли благоразумным принять владычество халифата. Однако в 642 г. был захвачен также Васпуракан и сопредельные районы. Договор, заключенный между Муавией и правителем Армении («Հայոց իշխան») Теодоросом Рштуни (652), был направлен против Византии, вследствие чего византийская армия в том же году вторглась в Армению. Войска Васпуракана, Сюника, Грузии и Албании оказали сопротивление.

---

57 W. Muir. նշվ. աշխ., էջ 297։
58 Ղևոնդ. էջ 17։
59 Նույն տեղում, էջ 18։
60 Նույն տեղում։
61 Հմմտ. J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 79—80։